

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Խառնված համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են
իրաւանչիւր բառին 2 կոպեկ:

Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԿԱՎՈՐԻՒՆ

Դատաստանական տօնը.— ՆԵՐՔԵՆԱԲԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկաթուղային աղէտ. Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան նիստը. Մի ըստնուհիւ ամեակ. Մատենագրութիւն. Նամակ Պետերբուրգից. Նամակ Ստաւրոպոլից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրեր.— ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԴԱՏԱՔԱՆԱԿԱՆ ՏՕՆԸ

Կայսր Ալեքսանդր II-ի փառաւոր ընթացիկներով ստեղծված նոր դատարանը այսօր, երեսուն և չորս տարուց յետոյ, տօնում է Բարձրագոյն վատահոգութեան և շնորհակալութեան այն հրովարտակը, որ հրատարակվեց ներկայ տարվայ յուլիսի մէկին: Մեր Կովկասը սկզբից և եթ ստացաւ նոր դատաստանական կանոնադրութիւնը և այսօր հանդիսանում է Բարձրագոյն հրովարտակը տօնողների մէջ առաջիններից մէկը: Անցեալ օր, սեպտեմբերի 19-ին, Թիֆլիսում կայացաւ հանդիսաւոր նիստ, որի մանրամասնութիւնները ընդերքովը կը գտնուէ «Մշակ» այսօրվայ ներքին լուրերի մէջ:

Բարձրագոյն հրովարտակը, ինչպէս նկատեցինք մենք ժամանակին, լոյս աշխարհ եկաւ ցոյց տալու, որ դատաստանական ընթացիկը արդէն ձուլվել է Ռուսաստանի կենտրոնի հետ, դարձել է նրա անբաժան մասը և այսուհետեւ միայն պիտի զարգանայ: Յայտնի է, որ Ալեքսանդր II-ի «հրապարակական, արագ և արդար» դատարանը ունէր բազմաթիւ թշնամիներ, որոնք երկար ժամանակ մաքառում էին նրա դէմ, համարելով նրան մի անկողող զարդ: Մի փնտրակար նորմութիւն, որ չէ համապատասխանում ժողովրդի բնակչութեան և կուլտուրական զարգացման աստիճանին: Մանաւանդ կատարի էր անհաշտ հակառակութիւնը երրօրեանների դէմ, որոնք ըրեցին դատավարութիւնների ժամանակ ներկայացնում են հասարակական իրողը: Այդ գեղեցիկ սկզբունքի դէմ հակառակորդները այն էին ասում, թէ ժողովուրդը ղեռ տգէտ է, պատրաստ չէ դատաւորի բարձր պաշտօնը հասկանալու և արժանապէս գործադրելու համար:

Այսօր այդ բոլոր թշնամութիւններին վերջ է դնում յուլիսի մէկին Բարձրագոյն հրովարտակը, և տօնելով նրան, դատաստանական աշխարհը տօնում է իր գոյութեան յաղթանակով: Հրովարտակի մէջ ասված է, որ այսօր Ռուսաստանում այլ ևս չը կայ մի այնպիսի անկէն, որ վայելիլիս չը լինէր դատաստանական նոր կանոնադրութիւնը, զի թիւթիւն և ամենքի հաւասարութիւն օրէնքի առաջ: Սա ինքն ըստ ինքեան մի ահագին փաստ է, որ ցոյց է տալիս թէ որքան ողորմելի էին դատաստանական ընթացիկների հակառակորդների պատճառարանութիւնները: Ահադին, լայնածաւալ Ռուսաստանը իր բազմազան ազգայնականութեամբ ընդունակ հանդիսացաւ վայելիլու այն առաջադիմական գեղեցիկ գործը, որ անմահացած է Ալեքսանդր II-ի կանոնադրութիւնների մէջ: Այսուհետեւ նոր դատարանը հակառակորդներ ունենալ չէ կարող: Վերացած են ամբաստանութիւնները, չարախօսութիւնները, և անկախ ու արդար դատաստանը պիտի զարգացնէ իր յաւիտեանական սկզբունքները իրեն բարձրացրած կենսից: Առաջադիմութեան մի փայլուն առհաստատութիւն:

Այդ ուղղութիւնն է ցոյց տալիս Բարձրագոյն հրովարտակը: Ողջունելով դատաստանական աշխարհի տօնը, մենք, որ միշտ հաւատացել ենք վաթսուական թւական-

ների փառաւոր ընթացիկների կենսատուայժին, ամբողջ օրտից ցանկանում ենք, որ երեսուն և չորս տարվայ փորձերով ամբողջացած արդար և ողորմած դատարանը առաջադիմութեան յաղթական քայլեր անէ Դահլիճ բարձրութիւնից ցոյց տուած ուղղութեամբ: Գանկանում ենք, որ շուտով այն օրը, երբ ամբողջ Ռուսաստանը կը վայելէ դատաստանական ընթացիկը իր ամբողջ ծաւալով, առանց կրճատումների: Այսպէս մեր Կովկասը մինչև այժմ զբոսված է երրօրեանների դատարանից: Այժմ, երբ հեռաւոր Միւրիսն էլ իր յետամնաց տեղացիներով կոչված է վարել իր դատաստանական գործերը 1864-ի կանոններով, մենք յոյս ունենք, որ Կովկասին կը շնորհվի երրօրեանների հիմնարկութիւնը—մի հանգամանք, որ ցոյց կը տար թէ երեսուն տարիների ընթացքում գործադրելով Ալեքսանդր II-ի դատաստանական կարգերը, մենք բաւականաչափ հասունացել ենք և զարգացել ենք քաղաքացիական պարտականութիւնների գիտակցութիւնը, ուստի և կարող ենք հասարակական իրողի արտայայտիչներ ուղարկել դատարան:

ՆԵՐՔԵՆԱԲԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԵՆԱԲԻՒՆ ԱՂԵՏ

Սեպտեմբերի 17-ին, ուրբաթ երեկոյ, Թիֆլիսում լուր տարածվեց, որ Կարս-Թիֆլիսեան երկաթուղու Սողանլու կայարանի մօտ, Թիֆլիսից 12 վերջու հեռավորութեան վրայ, մարդկային գնացքի խորտակումն է տեղի ունեցել: Մահաւատագրականների և զոհերի թիւ մասին տեղական ռուս լրագրողները հաղորդում են հետևեալը:

Երկաթուղու գնացքը բաղկացած էր 14 վագոններից, որոնցից 11-ը լրէն էին ճանապարհորդներով, որոնց թիւը, ինչպէս ասում են, հասնում էր 600-ի: Երբորդ կարգի վագոններում նստած էին զխաւորապէս բանւորներ և զբաղուցիների գնդի 55 զինւորներ, որոնք Ալեքսանդրօպոլից գնում էին Արմաւիր: Միջին վագոններում նստած էին զանազան մարդիկ, որոնց թիւում կային շատ կանայք իրանց երեխաներով: Իսկ վերջին վագոններում նստած էին ինտելիգենտ մարդիկ, որոնց թիւում Թիֆլիսի նահանգական դատարանի պրօկուրօր Նիմանդէր, նրա օգնական ֆօն-Կլուգէն, շտաբ-բոտմիտր իշխան Աբալիձէ և ուրիշները, որոնք ազատվեցին վերահաս վտանգից:

Խորտակման պատճառները, ինչպէս երևում է Թիֆլիսի նահանգական դատարանի պրօկուրօր Նիմանդէրի կատարած ըննութիւնից, հետևեալն է եղել: Մեքենավար Միխայիլը, երբ գնացքը մօտեցաւ Սողանլու գիւղին, չը տեսաւ սլաքի պահապանին և առհասարակ ոչ մի նախազգուշացնող նշան՝ գնացքի արագութիւնը պակասեցնելու համար. և որովհետեւ այդ կայարանում գնացքը կարելի չէ առնում, այդ պատճառով մեքենավարը գնացքին ընթացք տուեց սովորական արագութեամբ: Իսկ երբ տեսաւ, որ գնացքը պահեստի ճանապարհի կողմը, նա մի ակնթարթում ձեռք տուեց լծակին և սկսեց կանգնեցնել գնացքը, յուրիչ սուլոցներ արձակելով, որպէս զի գնացքի կողմը կողմերը նրա հետ միաժամանակ կանգնեցնեն վագոնները. բայց, դժբաղդաբար, կողմերը չկարողացան կանգնեցնել վագոնները, որովհետեւ կանգնեցնող գործիչները փչացած էին, չողջաբոժ մեքենան դուրս եկաւ բէլճիներէ և դժբաղդութեան առաջին անգամ այլ ևս անհնարին էր:

Խորտակված գնացքը սարսափելի տեսարան էր ներկայացնում. շրջակայքին կպած երեք մարդատար վագոնները ջարդվել, կտոր-կտոր են դարձել, պօռային վագոնը կտորատու էր, իսկ ետևի վագոնները դուրս են եկել բէլճիներից: Կանանց և երեխաների լացն ու կոծը բարձրացաւ, երբ լայնի դարձաւ աղէտը: Վա-

գոնների փշրանքների տակից լսվում էին վիրաւորվածների հեծեծանքները. շատերին երկուցը պապանձեցրել էր. վիրաւորվածներից մէկը ինքնազարի պէս սկսեց վազել դէպի Թիֆլիս, բայց ճանապարհին մեռաւ: Կարճ միջոցում աղէտի տեղը հաւաքվեցան զիւղացիներ և երկաթուղու բանւորներ, թիւով մօտ 1000 մարդ: Սողանլու կայարանում հեռագրական գործիչը չը կայ, ուստի մարդիկ գնացին Նախլուղ կայարանը և այնտեղից աղէտի մասին իմաց տուին Թիֆլիսի կայարանին: Թիֆլիսից արտակարգ գնացք ուղարկվեց աղէտի տեղը:

Վաղմունքներ մօտ 50 հոգի են. սպանված են զբաղուցիների գնդի երկու զինւորներ և մէկ տեղացի բանւոր, մնացածները զանազան վէրքեր են ստացել: Աղէտի տեղից վիրաւորվածներին Թիֆլիս փոխադրեցին բաց վագոններով. Սողանլուում վիրաւորական ոչինչ միջոցներ չը կային և առաջին բժշկական օգնութիւն վիրաւորվածներին հասցրին միայն Թիֆլիսում:

Կարսի երկաթուղու հիւանդանոցում ազատ տեղեր չը կային, այդ պատճառով 11 վիրաւորված զինւորներին ֆուրգոններով ուղարկեցին Թիֆլիսի զինւորական հիւանդանոցը: Սպանվածների դէպքին Անդրկովկասեան երկաթուղու հիւանդանոցին կից մատուցում են Նրանց տեղը սարսափելի էր: Դիւանքը ջարդ ու փշուր եղած, գնդի ծակերից երևում էր ուղեքը: Հիւանդանոցում գտնվող 18 վիրաւորվածներից մէկի տանքը ջարդված են և թէպէտ կորեցին նրա ջուլտ տանքը, բայց բժիշկները յոյս չունեն, թէ նա առողջանայ: Այդ դժբաղդը, առանց բժշկական որ և է օգնութեան և սարսափելի տանջանքներով էր տեղ հասել և կատարելապէս արւեստարած էր դարձել ճանապարհին: Երեք վիրաւորվածներ առողջանալու նոյնպէս քիչ նշաններ են տալիս: Գնացքի մէջ ծառայողներից ոչ ոք չը վնասվեց, որովհետեւ նրանցից շատերը կանգնած էին վագոնների պլաւֆորմների վրա և կարողացան դուրս թռչել: Այդ գնացքի մէջ գտնվող կանանցից միայն մէկը վնասվեց: Բացի զինւորներից, մնացած վնասվածները տեղացի բանւորներ են, իսկ բէլճիներ և հայեր:

Սեպտեմբերի 18-ին, ժամի 9 1/2-ին, աղէտի տեղը դնաց Կովկասի կառավարչապետ իշխան Կոլիբին, Թիֆլիսի նահանգապետի ուղեկցութեամբ, որտեղից կառքով գնաց և այցելեց Թիֆլիսի զինւորական հիւանդանոցը, ուր տեսաւ աղէտի ժամանակ վիրաւորված զինւորներին:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՄՍՏԸ

Կիրակի օր, սեպտեմբերի 12-ին, Թիֆլիսի բարձրագոյն դատարանի դահլիճում կայացաւ Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը: Ներկայ էին նախկին Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան անդամներէ 30 հոգի, որոնք և յայտնեցին իրանց նոր ընկերութեան անդամ և կազմեցին նոր կառավարութեամբ պահանջվող այն ընդհանուր ժողովը, որ պիտի կարգադրէր օրակարգում նշանակված հարցերը: Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց բժշկապետ Բ. Նաւասարդեան, իսկ քարտուղար պ. Երիւնեան:

Ընդհանուր ժողովին յայտնելով այն անձանց, որոնք աշխատել են նախկին Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան համար, նախագահը առաջարկեց ընդհանուր ժողովին, համաձայն նոր կանոնադրութեան, որոնց 1) Անդամավճարի բանակութիւնը, որ պիտի վեց բուրջ լուրջ պակաս չը լինի և 2) Վարչութեան անդամների թիւը, որ կարող է լինել վեցից մինչև տասներկու: Ընդհանուր ժողովը անդամավճար սահմանեց վեց բուրջ, իսկ վարչութեան անդամների թիւը—ինն հոգի և երկու փոխանդամ: Բացակայ եղող անդամների վերաբերմամբ որոշվեց, որ եթ նրանց ցտկութիւն կը յայտնեն Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան անդամ լինել, այն ժամանակ նրանք էլ ընդունված կը համարվեն իբրեւ ընկերութեան անդամ:

Ժողովը բժշկապետ Նաւասարդեանին ընտրեց պատուաւոր անդամ, իբրեւ Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան անդամի: Նախկին ժողովան անդամների վերաբերմամբ որոշում չը կայացաւ: Ապա սկսվեց պաշտօնատար անձանց ընտրութիւնը: Նախկին խորհրդի նախագահ պ. Ալեքսանդր Մէլիք-Աղաբեանց հրաժարվեց ընդհանրութիւնից, և ժողովը յայտնեց նրան իր շնորհակալութիւնը այն երկարամեայ ծառայութեան համար, որ մատուցել է պարունը Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան՝ նրա հիմնարկութեան օրից վարելով խորհրդի անդամի պաշտօնը: Նոր-վարչութեան անդամներ ընտրվեցին նախկին խորհրդի անդամներ՝ իշխանուհի Մ. Թումանեան, Փ. Վարդապետեան, Ա. Երեցփոխեան, բժ. Զարգարեան, Յ. Ամիրխանեան. նոր անձինք—Մ. Կոլիբինեան, Ս. Կոլիբինեան, Պ. Ալիբեկեան, Հ. Արախանեան: Վարչութեան անդամութեան համար ընտրվում էր և Պ. Ա. Մէլիք-Ալվաղեան, բայց մնացածներից պակաս սպիտակ ըուէ ստացաւ և ժողովը որոշեց համարել նրան փոխանդամ. փոխանդամ ընտրվեցան՝ Ս. Մարխասեան և Յ. Թումանեան, և որովհետեւ դրանց թիւը երկու պիտի լինէր, ուստի փոխ-անդամներ կը լինեն Մէլիք-Ալվաղեան և Մարխասեան: Վերաւարտվող յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Ա. Երեցփոխեան, Յ. Անապեան և Յ. Երիւնեան, իսկ փոխ-անդամ Ա. Բախլիեան և Հ. Ալախեան:

Ժողովը բացվեց երեկոյեան 7 1/2 ժամին և փակվեց 9 1/4 ժամին:

Նոյն օրը, առաւօտեան ժամի 11-ին, տեղի ունեցաւ և Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը: Համաձայն նոր կանոնադրութեան, ընդհանուր ժողովը որոշեց ընտրել բարչութիւն 9 հոգուց: Ընտրվեցին՝ տ. Ս. Մովսիսեան, Հ. Մարտիրոսեան, Մ. Խատիսեան, իշխանուհի Մ. Թումանեան, Վ. Ռոտմիսեան, Յ. Թարթիսեան, օր. օր. Մ. Կարապետեան և Ալեքանդրեան: Ինչպէս և նախորդ ընդհանուր ժողովում, որ տեղի կուենայ եղող կիրակի օր:

ՄԻ ՔՍԱՆԵՐԹԵՐՈՐԴ ԱՄԵՐԿԱ

Առաջիկայ հոկտեմբերի 4-ին, ինչպէս արդէն յայտնեցին մի քանի լրագրողներ, Մոսկվայում կայանալու է մի համետ հանդէս, որը պէտք է գրաւի հայ հասարակութեան ուշադրութիւնը: Մեր խօսքը յայտնի հրապարակախօս Գրիգոր Զանչեանի գրական գործունէութեան 25-ամեակի մասին է: Այդ յօբեկանը տօնելու միտքը, որքան մեզ յայտնի է, ծագել է Մոսկվայի ռուս հասարակութեան շրջաններում այս ամառ, Գ. Զանչեանի բացակայութեան միջոցին:

Ով որ ի մօտոյ ճանաչում է այդ տաղանդաւոր հրապարակախօսին, գիտէ անուշտ, թէ որքան նա միշտ եղել է համետ և խուսափել է հասարակական աշխարհի ցոյցերից,— և թէ նա այս դէպքում համաձայնվել է այդպիսի մի հրապարակական տօնախմբարարութեան,— որն շարժառիթ եղել է այն միակ նպատակը, զի նրա յարգելի յօբեկաբը նուրբ է վերջին մի քանի տարիների ընթացքում իր բոլոր ոյժերը... Ռ'ւմ չէ յայտնի, թէ որքան մեծ եւանդով նա սկսեց և առաջ տարաւ «Врагская Помощь» ժողովածուի հրատարակութիւնը, որ կարճ ժամանակամիջոցում ունեցաւ երկու տպագրութիւն, և որի երրորդ տպագրութեանը նա պատրաստում է շուտով ձեռնարկել... Այդ հրատարակութիւնից ստացած ամբողջ եկամուտը, բազմաթիւ կամաւոր նուէրներով հանդերձ, Գ. Զանչեանը յատկացրել է Թիբեթի հայերի բազմաթիւ որբերի օգտին: Մօտ 25,000 ռ. մինչև օրս ուղարկած լինելով Վ. Պոլսի ռուսաց դեսպանի անունով այդ նպատակի համար՝ նա դարձեալ նոր եւանդով շարունակում է արժարեկ այդ խնդիրը և հանդանակութիւն անել այդ գործի համար:

փշացան: Մօտ հազար բուրբու ձուկ հաւաքվեց: Այս դէպքը հազարապիտաներից մէկն էր:

ԱՐԻՍՏԱՆԻՑ մեզ գրում են. «Անպատեհների 12-ին կայացաւ դերասան պ. Վրոյրի ներկայացումը: Թաղաքին «Բաղդասար Աղաբաբ» կոմէդիան և «Անանուն կատակ» փողովիլը: Մեր կուրած անկունում այդպիսի գեղեցիկ և աղող ներկայացումը հրաշք պէտք է համարել: Թատրոնը ծայրէ ի ծայր լինէր և «Բաղդասար Աղաբաբ» մեր ժողովրդին մտածելու նիւթ տուց: Հասարակութեան խնդիրքով 15-ին տրվեց երկրորդ ներկայացումը. խաղացին «Բոն Բրէգորի» և «Մերկ-նիկը», որոնք շատ աղող անցան. բոլոր տեղերը բռնված էին: Այդ ներկայացման արդիւնքից մի մասը պ. Վրոյրը յօժարակամ հայ-կաթողիկէներու ուսումնարանին նուիրեց, ի նկատի ունենալով դեպքիցի ներկայական նեղ վիճակը: Պ. Վրոյրի ինքնայօժար արած նուիրաբերութիւնը շատ լատպակութիւն թողեց համազգի երկու հասարակութիւններին: Խոսելով իրենց մասին վրաս Կարծեմ ժամանակ է, որ լուսաւորչական և կաթողիկէ հայերը միմեանց օգնութեան ձեռք մեկնելու համար այլ ևս երկար չը մտածեն:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Բնական տեղեկացման, էլքիմիայի հեռագրով կանչված են Մատթէոս և Տիրայր վարդապետները—առաջինը, երևի, իր ներկայացման հրաժարականի հիման վրա, իսկ երկրորդը—կոնդակ ստանալու և նորից Շուշի վերադառնալու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՎԵՑԱՐԻՍՏԻՑ

Ժընիվ, 7 սեպտեմբեր

Կաղվինի գրած դրոշմը դեռ երևում է Ժընիվի վրա, բայց ժամանակի աւելիք ձեռքը շատ անգամ է անցել նրա վրայով: Մի փոքր հեռու ս. Պետրոսի տաճարից, ուր Կաղվին այնքան որոտալից նուրբներ էր կարդում մի ժամանակ աշխարհային զուարճութիւնների դէմ, այժմ բարձրանում է մի հոյակապ թատրոն, որի բեմի վրա յաճախ շահատակում են բալետի հերոսուհիներ և որի շքեղ ֆլոյէի որմանկարներում վիտուս են կանացի մեքէ մարմիններ...

Այդ թատրոնը, ուր ձեռքը տրվում են օպերաներ, օպերետներ, թեմէ կատակերգութիւններ և փողովիլներ՝ միշտ ոյծերով, անկասկած, աւելի հետաքրքրութիւն է ներկայացնում ամառը, երբ իրանց արտիստական պայտանքի ժամանակ այցելում են Ժընիվը զանազան բեմական աստղեր: Այդպէս, օրինակ, այս ամառական վերջում իրար ետևից այցելեցին մեր քաղաքը Էլժոնորա Գուլէ, Կալէն Երէցը և Սարա Բէրնար, որի խաղը «Համլէտ»-ում, կարծում ենք, հետաքրքիր կը լինի «Մշակ» ընթերցողների համար:

Ծրանսիացի և Ելքայի. կին և Համլէտ: Այդ շատ հետաքրքիր էր հոգեբանական տեսակետից: Արդե՞ք Ֆրանսիացի փոխադրողը—Ֆրանսիացիք առհասարակ փոխադրում են, չեն թարգմանում, այնքան անընդունակ են նրանք մտնել օտարի հոգու մէջ—չէ աշխատել Ելքայի գրու գործոցը, ինչպէս Բարբէ արտադրել է Ելքի Օրլանի կողմ, արդե՞ք Սարա Բէրնար չէ տապալելու Համլէտի դերը, ինչպէս տապալում է, մեր կարծիքով, Ժան դ'Արկի դերը: Վերջապէս, ինչ յանդուգն բայ՝ խաղալ երիտասարդ տղամարդի դեր, լինելով յիսունհինգ տարեկան դերասանուհի: Սակայն, ինչպէս ասում են, նա ինքը՝ Համլէտի բնավորութիւնը աւելի կանայքի է համարում քան աշխարհ—անկասկածելի է, յամենայն դէպս, որ Համլէտի հոգու մէջ կան կանայքի տարրեր—և նրանից առաջ եղել է մի դերասանուհի (գուցէ և մի քանի), Եմիլի Լըբու, որ խաղացել է նոյն դերը: Թերևս Համլէտի բնավորութիւնը պէտք է ներկայացնել իբրև սինթէզ, իբրև համադրութիւն կանայքի և առնականի, ինչպէս համադրական գրու է ներկայացրել Յովնանէս Մկրտչի գրու իր հոյակապոր նկարում ռուս հանձարեղ նկարիչ Իվանովը, որի փորձանկարները (Մովկայի Румянцевский музей-ում) ներկայացնում են աստիճանական փոխանցումն կանայքի գլխից դէպի առնականը: Պէտք էր տեսնել:

Տեսանք: Ետէն Մօրանի և Մարտէլ Եվօրի նոր, արձակ թարգմանութիւնը մօտ է բնագրին և աղող, որքան կարելի է դատել մի անգամ ներկայ լինելով ներկայացման: Իսկ Սարա Բէրնար հիանալի Համլէտ է ճիշդ է՝ լատինացեալ Համլէտ, առանց իր հիւսիսային մեղմացման, առանց, եթէ կարելի է այսպէս ասել, այն հոգեբանական մշուշի, որ յատուկ է անգլո-գեր-

մանական ցեղին և որ անմատչելի է ուղիղ գծեր, պայծառ կոնտուրներ սիրող, ստուերներին, նիւաններին խուսափող և նոր հոգեբանութեան մէջ ստորագրիտակցական (подсознательный) կոլովոլ ներքին աշխարհը արհամարհող լատինական, մասնաւորապէս ֆրանսիական տրամաբան հանձարին, որովհետեւ Սարա Բէրնար ֆրանսիուհի է հոգով, թէպէտ և հրէուհի ծագումով: Իբրև ֆրանսուհի՝ Սարա Բէրնար երբեմն դիմում էր գէկլամացիայի, որ մարմին և արիւն է դարձել ֆրանսիացիների համար և որին այնքան դժուարութեամբ ենք կարողանում ազդեցութեան տակ կրկնապէս ռուսաստանցիներ: Միւս կողմից, նրա ռուսէ ձայնը ենթակվել է մի քիչ ժամանակի ազդեցութեան և խզվածի տպաւորութիւն է գործում, երբ պէտք է մաքնչայ պայտանքի բազմաբնու, իսկ դէմքը, որ, կանայքի լինելով, Համլէտի տարբերից չանէլ է թրւում կողքահան, դիմացից՝ ընդհակառակը՝ աւելի յարմար է (իր աշխարհ գրիմով) ընդ կօծիկական դերերի, քան մեղամաճառ իշխանի համար: Վերջապէս կան կազմուածքի առանձնապատկերներ, որոնք շարունակ խանդավորում են բեմական իլլուզիային, պատրանքին: Սակայն չը նայելով այդ բոլորին, հանձարեղ դերասանուհի խաղը այդ դերում հրանալի է ինքնակերպ, խոր մտածված, զարմանալի ճշդութեամբ հաշւած, մինչև վերջը թափանցված և վերին աստիճանի էֆֆեկտաւոր:

Զարմանալի և տիւր զուգակցութիւններ: Այն ժամանակ, երբ Սարա Բէրնար արտասանում էր բեմում Համլէտի նշանաւոր մենախօսութիւնը՝ «Լինել թէ չը լինել», մի քանի քայլ հեռու, քաղաքային պարտէզում, համալսարանի առաջ, որո՞՞նք էր իր մտքում նոյն հարցը մի թշուառ հայ երիտասարդ՝ Նիկ. Աւարեան, որ չունէր, ինչպէս երևում է, Դանիայի իշխանի փիլիսոփայական անվճռականութիւնը: Ժամի 10-ին դրօշում է խօսում է ծանօթների հետ, իսկ մի ժամ անցած նոյն պարտէզում սէֆֆօլիէրի հարուածով վերջ է տալիս իր ողբերգի կեանքին:

Կան մարդիկ, որոնք աւելի լաւ գիտեն մեռնել քան ապրել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԻ

—«НОВОСТИ» լրագրին հեռագրում են, որ Դերէֆուս գրել է Երէք-Կեստիների փեսային. «Նս երբէք չեմ մոռանալ, թէ ինչով եմ պարտական հանգուցեալին: Սա կը պատմեմ իմ որդեկրանց նրա անձնութեանը: Երբ նրանց հօրը կանանք վերադարձան: Սա ես նրանց կը պատուիրեմ՝ սիրել նրան և յարգել նրա յիշատակը: Սարա-Բէրնար Երէք-Կեստիների դազալի վրա մի պընակ է դրել «Ճշմարտութեան առաքեալին» մակագրութեամբ: Պատկեր են եղել դրված նաև «Ծրանսիական կանայց միութեան» կողմից և «Ռուս յարգողների խմբից»:

—«СНЬ ОТЕЧЕСТВА» լրագրին հեռագրում են, որ Կնեժեվիչն իրանքին են բռնել ամսին 15-ին: Պատմից անո՞՞ք նա նորից կրկնեց, որ բացի Իրանից, բոլոր դատապարտվածները անմեղ են:

—«Figaro» լրագրին հաղորդում են Բրիտանից, որ Օրլէանեան դքսի բնակութեան տեղը վերջապէս յայտնվեց: Նրան այս օրերս սպասում էին Բրիտանից «Hôtel de Flandre» հիւրանոցում, բայց նա հաղորդեց, որ այնտեղ ինքը այլ ևս չի գալ, և որ իր անունով ստացվել է թղթակցութիւնները ուղարկվեն Ունդարթա, Ալչուտ, որտեղ բնակվում է նրա անեք Էրցհերցոգ Իոսէֆ:

—«Press Association» լրագրը հաւատացնում է, որ Նախագահ Կրիզզեր դիմել է երեք երօպական մեծ պետութիւնների օգնութեանը:

—«Manchester Guardian» լրագրի ասելով, մինիստրների ժողովում, Լոնդոնում, որովհէլ է՝ Տրանսիլանից բացառական պատասխան տալու դէպքում՝ վարել այնպէս, ինչպէս և 1878 թվ. Աղանիստանի պատերազմից առաջ: Սրբ Եր-Ալի հրաժարվեց ընդունել անգլիական յատուկ դեսպանութիւնը, նրան ուղարկվեց վերջին ուղտիմատում և որովհէլ ժամանակավորապէս անցնելուց յետոյ, սկսվեցին զինուորական պատրաստութիւնները: Մէկ շաբաթից յետոյ պատգամաւորների ժողով հրաւիրվեց, որը և գումարվեց անմիջապէս:

—«Новости» լրագրին հեռագրում են Վիեննայից. «Բէլգրադում վրդովված են Կնեժեվիչի գործի դատաւճիթը: Ասում են, թէ արմատականներին կամեցան ոչնչացնել, բայց նախատանքի դարձրին: Կնեժեվիչը երգեց, որ դատապարտվեցին անմեղները: Պաշխ թագաւորին ուղարկված շնորհակալական հեռագրի մէջ ասում է. «Սա կը հրաժարվեմ քաղաքական անցեալից: Նրդովում եմ, որ ապագայում ես կը զբաղվեմ պետական այն կարգի մարաքմամբ, որ յայտարարել է թագաւորը 1897-ին: Խրախուսված ձեռն օգոստոսիա Տօրից, ես երգում եմ նուրբի իմ կեանքի միացորդը թագաւորին և հայրենիքին: Սա կը իւրեւնի անկարգութեան բոլոր տարբերի դէմ: Շնորհակալ եմ անասման

ողորմածութեան համար: Պաշխ շնորհակալական հեռագրը ընդհանուր զարմանք պատճառեց:

—Երէք-Կեստիների թաղումը շատ շքեղ էր: Ֆրանսիական ինտելիգենցիայի ծաղիկը ներկայ էր թաղման: Վերադարձին ի պատիւ Բրիտանի և Պիկարի մեծ ցոյցեր տեղի ունեցան: Բրիտան պատասխանեց. «Կեցցէ հանրապետութիւնը: Պաշտպանե՛ք նրան»:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 սեպտեմբեր

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բացատրեց, որ մարտամտով Կիւլի համալսարանից արձակված հրէայ ուսանողները, որոնք նորից յետ չեն ընդունվել համալսարանում հրէաների թիւը տասը տոկոսից անցելու պատճառով, կարող են ընդունվել Նոր-մայից դուրս: Կրկին պէտք է ընդունվեն մօտ 200 հրէայ ուսանողներ:

ՊԱՐԻՑ. Գալիֆէ գրում է «Figaro» լրագրում, որ ինքը միայն մէկ անգամ է Օրլէանեան դքսին նամակ գրել, որով մերժել է ուղարկած հրաւերը:

ԼՕՆԴՈՆ. «Times» լրագրում հրատարակված է Պրէտորից մի հեռագիր, որի մէջ առաջ է թերված Կրիզզերի հետ ունեցած խօսակցութիւնը: Նախագահը յայտնել է, թէ ինքն ամեն միջոց գործ է դրել խաղաղութիւնը պահպանելու համար: Նա ընդունեց Զէմբերի սեփական առաջարկութիւնը՝ միտեղ գործելու մասին, բայց Զէմբերին դիմաժող ընդհատեց բանակցութիւնների կապը: Զօրեքը համախմբվում են ամեն կողմից: Տրանսիլանի ռժով ուղում են Կալէնից: Պատասխանել անգլիական հեռագրին համաձայնութեամբ՝ անկարելի է, որովհետեւ այդ կը նշանակէր երկրորդ ու ժողովուրդը յանձնել ուրիշ ձեռքը: Այն հարցին, թէ արդե՞ք յոյս կայ է իր խաղաղութիւնը պաշտպանելու, Կրիզզեր պատասխանեց. «Նի՞՞թ միայն Բրիտանիան այնպիսի մի բան անէ, որ խաղաղութիւնը հնարաւոր դարձնէ: «Թղթակցը աւելացնում է, որ Պրէտորիայում ամենքն էլ սպասում են պատմաւորի ամեն մի բօլի:

ՊԱՐԻՑ. Միապետական մեղադրեալների փաստաբանները ծանօթացան ընտելեան հետեանքների հետ. կարծում են, որ նրանք հարց կը յարուցանեն բարձրագոյն դատարանի անհեղինակաւորութեան մասին: Վաղը տեղի կունենայ Կերուլէզի հարցուփորձը:

18 սեպտեմբեր

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Բէյտէրի գործակալութիւն» Այստեղ եւանդոլ աշխատում են բուրգերներ և արտիլերիա ուղարկել Յօլսըրուտ: Հանապարճ են ընկել արդէն 26 գնացք: Գլխաւոր հրամանատար Ժուլըզ վաղը գնում է Յօլսըրուտ: Ազգային ժողովը որոշեց՝ այն օտարերկրացիներին, որոնք կը գործեն բօքսերի հետ, պատերազմից յետոյ իրականաւոր ընտրողական իրաւունք տալ: Կերմանական մի կամաւոր խումբ, 800 մարդուց բաղկացած, գնաց արդէն Յօլսըրուտ: Հօլանդական զօրաբանից գնում է այնտեղ երկուշաբթի օրը: Մի քանի պետական հիմնարկութիւններ և բարձրագոյն դատարանը վաղը փակված կը լինեն, որից յետոյ անմիջապէս պատերազմական դրութիւնը կը յայտարարվի: Ահտօրից յետոյ տեղի կունենայ երկուրադների համաժողովը:

ՊԱՐԻՑ. Բարձրագոյն դատարանի յանձնաժողովի պատուիրակները աւարտեցին զօլումենտների քննութիւնը և սկսեցին մեղադրեալներին հարց ու փորձի ենթարկել: Կերուլէզ անստեղ բերվեց և կանգնեց յանձնաժողովի առաջ իր պաշտպանի հետ: Նա հրաժարվեց պատասխանել հարցերին, յայտնելով, որ ինքը հեղինակաւոր չէ ճանաչում բարձրագոյն դատարանի և իրան բացատրութիւնները թողնում է մինչև հրապարակական նիստը: Կերուլէզին տարան ապա Santé բանտը:

ՎԻԵՆՆԱ. «Հաւասի գործակալութիւն» Հրամանագրված է նոր մինիստրութիւն կազմել կոմս Կլարի նախագահութեամբ:

ԼՕՆԴՈՆ. Երէկվայ մինիստրական խորհրդի մասին ճիշդ ոչինչ յայտնի չէ: «Standard» լրագրի խօսքով, Տրանսիլանի յայտագիրը դեռ վերջնականապէս կազմված չէ և կը լինի կարճ և վրձնական: Պատգամաւորների ժողովը կը հրաւիրվի ոչ ուշ հօկտեմբեր ամսվայ երրորդ շաբաթից:

Կ. ՊՈԼԻՍ. Պաշտօնական տեղեկութիւնից երևում է, որ Արդինեան վիլայէթում տեղի ունեցած երկրաշարժից սպանվել են 783 մարդ, մանր վէրքեր ստացել են 657 մարդ:

ՍԱՆՏՊԱՍՏԱՆ. Կարենտը վերակազմ-

վեց: Բոլոր մինիստրները մնում են իրանց տեղերը և նախկին պաշտօններում, բացի Պալաւիլից, որի տեղ նշանակվեց Ասկարապա:

ՊԱՐԻՑ. Ռուսաց պօստ-հեռագրական լիւսաւոր վարչութեան կառավարիչ Պետրով այցելութիւն գործեց մինիստր Մուժօին, որից յետոյ միասին այցելեցին կենտրոնական տեղեֆօնային կայարանը:

Այսօր, կէսօրից յետոյ, բարձրագոյն դատարանի յանձնաժողովը հարց ու փորձի ենթարկեց Բալիեր և Բարլիլէ մեղադրեալներին: Յայտարարելով իրանց պլէբիսցիտային հանրապետականներ, նրանք ասեցին, որ իրանք կը պատասխանեն միմիայն բարձրագոյն դատարանի առաջ:

ՊԱՐԻՑ. Բարձրագոյն դատարան: Սկսվեցին հարց ու փորձերը: Կերուլէզ հրաժարվեց պատասխանել և յայտնեց, որ ինքը առաջուց դատապարտված է: Նա չի աշխատի արդարանալ դուստիկ նիստում: Բերանով չը պնդեց: Կէս օրից յետոյ բերին Լիւկսեմբուրգեան պալատը Բալիլէին երկու փաստաբան ուղեկցութեամբ: Բերանով յայտնեց, որ նա կարող է թոյլ տալ միմիայն մէկ փաստաբանի, այն ժամանակ փաստաբանները բողոք յայտնեցին, որը արձանագրութեան մէջ մտցրին և հեռացան: Բալիլէ պաշտոն ամենայնիւ, կրկնեց իր ցուցմունքները, որը նա արել էր քրէական դատարանի առաջ, Բէյլի զօրանդներին մօտ եղած միջնադէպի առիթով: Բարլիլէ նոյնպէս լուովիւն պահպանեց: Բերանով, ինչպէս ասում են, կամենում է նոր ընտելութեան կատարել Բէյլի գործի մասին:

20 սեպտեմբեր

ԴՈՒՐԻՍՆ. Չորս հազար բօքսեր ճանապարհ ընկան դէպի Յօլսըրուտ, Չանդէնրուտ և Բօ-օֆ. Կիւլէրէյն մօտ, Նատալիի հիւսիս-արեւմտեան սահմանի մօտ, նոյնպէս կենտրոնացած են նշանաւոր ոյծեր: Գերմանական կամաւորների զօրաբանից երէկ գնաց պատերազմի դաշտը, հօլանդական զօրաբանից գնում է երկուշաբթի, իսկ իրանդականը—այսօր: Այդ բոլոր զօրաբանիցները գնում են դէպի սահմանը՝ բօքսերին օգնելու համար:

ԼՕՆՆ. Լանչուսկ մի բանկէտում, որ տուեցին նրան նրա ընտրողները, յայտնեց, որ հանրապետականները իսկապէս հասկացան թէ ինչ վտանգ էր սպառնում հանրապետութեանը և միախմբվեցին: Փրանսիան փրկելու համար, որը ճշմարտագոյն դուրս եկաւ յաղթող և աւելի ուժեղ: Հալաւաւորողները, շարունակեց մինիստրը, նոյնպէս համախմբվեցին: Միապետականները, նացիօնալիստները և ուրիշները առաջարկում են Գալիֆէին իրանց հետ միանալ, բայց իշուր են նրանց ջանքերը: Գալիֆէն, մեզ բողոքի նման, հաւատարմիւ է հանրապետութեանը:

ՎԻԵՆՆԱ. Մինիստրութիւնը հետեւալ կերպով է կազմակերպված՝ կոմս Կլարի—մինիստր-նախագահ, Կէրէր—ներքին գործերի մինիստր, Վրտէլ—երկաթուղիների մինիստր, Վլեյքեր—Տէլ—երկրի պաշտպանութեան մինիստր, Կլիւզինէր—արդարագաւորութեան մինիստր, Կօլբենշտէյն—ֆինանսների մինիստրութեան կառավարիչ, Գարտէլ—ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ: Նոր մինիստրների ցուցակը կը հրատարակվի երեքշաբթի:

ԴԵՆԻ. Նշաններից երևում է, որ բօքսերը դիտաւորութիւն ունեն յարձակողական դիրք բռնել: 5000 բօքսեր կենտրոնացած են համալսական սահմանի մօտ:

ԼՕՆԴՈՆ. «Բէյտէրի գործակալութիւն» Հաւաքյին Աֆրիկայից հաղորդում են, որ բէրկօշայեան գոճից ճանապարհ ընկաւ դէպի Նիւ-պօրտ, երկաթուղիների հանգոյցը, Միդլէքսթօրից դէպի հիւսիս: Բօքսերը բանակ դրեցին ուժ մղօս հեռաւորութեան վրա Յօլսըրուցից և պատրաստվում են նշանաւոր ոյծեր կենտրոնացնելու Բուֆֆալօ գետի երկու կէտերի վրա: Զարկուտներից Եօսանէսթուրգ գնացող պօստային գնացքը բռնկեց տրանսիլանիան կառավարութեան կողմագրութեան համաձայն. և ճանապարհորդները յետ բերվեցին Նատալ:

Պրէտորիական զօրքը, ազգաբնակչութեան ուղեւորված ցոյցերի ուղեկցութեամբ, երէկ գնաց դէպի սահմանը: Յօլսըրապի մի քանի անդամներ, որոնք ներկայ էին զօրքի ճանապարհ ընկնելուն, աղաղակում էին՝ «Ահա մեր ուղտիմատուժը»:

Պրետորիայում հրատարակված կարգադրութեան համաձայն, քաղաքացիական բողոք դատարանները փակվեցին: Նահանգական դատարանների նստաշրջանը յետաձգված է անորոշ ժամանակով:

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванская ул., № 27.